Ardshinbank

**«Արդշինբանկ» ԲԲԸ Խորհուրդը 2026 թվականի մայիսի 29-ի թիվ 06/26-01 Ա որոշմամբ որոշել է՝**

1. «Արդշինբանկ» ԲԲԸ (այսուհետ՝ նաև Բանկ) զուտ շահույթը՝ մինչև 45,000,000,000 (քառասունհինգ միլիարդ) ՀՀ դրամ գումարի չափով (հարկերի նվազեցումից հետո) բաշխել «Արդշինբանկ» ԲԲԸ հասարակ բաժնետոմսերի տիրապետող բաժնետերերին որպես միջանկյալ շահութաբաժիններ՝ «Արդշինբանկ» ԲԲԸ կանոնադրական կապիտալում նրանց ունեցած մասնակցությանը համամասնորեն:

2. Միջանկյալ շահութաբաժինների վճարումն իրականացնել մինչև 2026 թվականի հուլիսի 06-ը ներառյալ, եթե շահութաբաժինների վճարման օրվա դրությամբ Բանկի՝ ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով զուտ շահույթը բավարար է սույն որոշման 1-ին կետով սահմանված չափով միջանկյալ շահութաբաժինների վճարման համար, ինչպես նաև պայմանով, որ նման վճարումը չի հանգեցնի Բանկի կողմից օրենսդրական և պայմանագրային պարտավորությունների խախտման:

Եթե միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա որոշված Բանկի զուտ շահույթը բավարար չլինի սույն որոշման 1-ին կետով նախատեսված չափով միջանկյալ շահութաբաժինների վճարման համար, միջանկյալ շահութաբաժինների վճարումն իրականացնել առավելագույն հնարավոր չափով՝ փաստացի ստացված զուտ շահույթի սահմաններում:

3. Շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմել 2026 թվականի մայիսի 19-ի դրությամբ՝ ճշգրտելով 2026 թվականի հուլիսի 03-ի դրությամբ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: